**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հուլիսի 2020թ. թիվ 512-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ԱՎԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2020 թվականի հունվարի 29-ին և 2020 թվականի հունիսի 18-ին հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագրերի՝ ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության, ծրագրերի ներկայացման ժամկետների ժամանակացույցը, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Ձորագետ համայնքի ղեկավարի 01.07.2020թ. թիվ Ե-01/180, ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ղեկավարի 01.07.2020թ. թիվ 253, ՀՀ Լոռու մարզի Սարալանջ համայնքի ղեկավարի 06.07.2020թ., ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի ղեկավարի 03.07.2020թ. թիվ 288-20, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 03.07.2020թ. թիվ 1153-20 և 03.07.2020թ. թիվ 1154-20 գրությունները՝ ծրագրերի ավարտի մասին և ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի փետրվարի 5-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 05.06.2020թ. թիվ 6 որոշումը /կցվում է/՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Ավարտված համարել Դարպասի համայնքապետարանի կողմից իրականացված «Դարպաս համայնքի գերեզմանատան ցանկապատում, տարածքի բարեկարգում» ծրագիրը:

2. Ավարտված համարել Ձորագետի համայնքապետարանի կողմից իրականացված «Ձորագետ համայնքի խաղահրապարակի վերանորոգման, բարեկարգման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքներ» ծրագիրը:

3. Ավարտված համարել Սարալանջի համայնքապետարանի կողմից իրականացված «Սարալանջի խաղահրապարակի կառուցում և ցանկապատում» ծրագիրը:

4. Ավարտված համարել Մեծավանի համայնքապետարանի կողմից իրականացված «Մեծավան համայնքի Միխայելովկա գյուղի 43.4 հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում» ծրագիրը:

5. Ավարտված համարել Տաշիրի համայնքապետարանի կողմից իրականացված «Տաշիր համայնքի 45 հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում» ծրագիրը:

6. Ավարտված համարել Տաշիրի համայնքապետարանի կողմից իրականացված «Տաշիր համայնքի 53.4 հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում» ծրագիրը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հուլիսի 8
ք.Վանաձոր2